

## Ի՞նչ է COVID-19-ի Կոմպենսատիվ ուսուցման պլանը

Հաշմանդամություն ունեցող աշակերտներն ունեն անվճար հանրային համապատասխան կրթության (FAPE) իրավունք:

COVID-19 համաճարակը բացասաբար է ազդել դպրոցների վրա՝ հանգեցնելով ուսումնառության խափանումների ամբողջ երկրում: Հաշմանդամություն ունեցող աշակերտների համար կարող են պահանջվել Կոմպենսատիվ կրթության ծառայություններ՝ լուծելու ցանկացած կրթական կամ այլ թերություններ, որոնք բխում են այն բանից, որ IEP-ով կամ Section 504-ով աշակերտները չեն գնահատվել կամ չեն ստացել ծառայություններ, որոնց համար նրանք իրավասու էին COVID-19 համաճարակի ժամանակ: Հաշմանդամություն ունեցող աշակերտները կարող են նաև վերականգնման ծառայությունների կարիք ունենալ համաճարակի ժամանակ իրենց կրթության ընդհատումների հետևանքով կորցրած հմտությունները վերականգնելու համար:

Լուս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանն իրականացրել է երկու մոտեցում՝ COVID-19 համաճարակի ազդեցությանն արձագանքելու գործընթացների համար:

**Կոմպենսատիվ ուսուցումը** դա հատուկ ուսուցում է և հարակից օժանդակ միջոցներ և ծառայություններ են շտկելու ցանկացած կրթական կամ այլ թերություններ, որոնք առաջացել են հաշմանդամություն ունեցող աշակերտների (IEP-ով կամ Section 504-ի պլանով) գնահատումները չանցնելու կամ ծառայությունները չստանալու պատճառով, որոնց իրավունքը ստացել են COVID 19-ի համաճարակի ընթացքում:

**Վերականգնման ծառայությունները** դա լրացուցիչ աջակցություն է, որն առաջարկվում է հանրակրթական և հատուկ կրթության աշակերտներին՝ համաճարակի հետ կապված դպրոցական հաստատությունների փակման հետևանքով առաջացած ուսման հնարավոր կորուստների դեմ պայքարելու համար: Վերականգնման ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://achieve.lausd.net/Page/17665>

## Կոմպենսատիվ

Կոմպենսատիվ կրթական ծրագիր COVID-19-ի ժամանակ  
Էլ. հասցե՝ Covid\_Comp\_Ed\_Plan@lausd.net  
(213) 241 - 7696

**Հատուկ կրթության բաժին**  
**Դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայություններ (SFSS)**  
(213) 241 - 6701  
Ֆաքս՝ (877) 339 - 2684

**ԼԱՄԴՇ-ի ընտանեկան թեժ գիծ**  
(213) 443 - 1300

**Աշակերտի և ընտանիքի առողջության թեժ գիծ**  
(213) 241 - 3840

**Հատուկ կրթության բաժին**  
Կենտրոնական թաղամաս  
2328 St. James Pl. Los Angeles, CA 90007  
(213) 766 - 7381

Արևելյան թաղամաս  
2151 N. Soto St. Los Angeles, CA 90032  
(323) 224 - 3300

Հյուսիսարևելյան թաղամաս  
8401 Arleta Avenue Sun Valley, CA 91352  
(818) 686 - 4400

Հյուսիսարևմտյան թաղամաս  
6621 Balboa Boulevard Van Nuys, CA. 91406  
(818) 654 - 3600

Հարավային թաղամաս  
1208 Magnolia Ave. Gardena, CA 90247  
(310) 354 - 3431

Արևմտյան թաղամաս  
11380 W. Graham Place Los Angeles, CA. 90064  
(310) 914 - 2100

Վաղ մանկության/նախադպրոցական հատուկ կրթություն  
333 S. Beaudry Ave. 17th Fl. Los Angeles, CA 90017  
(213) 241 - 4713

# ԿՈՄՊԵՆՍԱՏԻՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ COVID-19-Ի ԺԱՄԱՆԱԿ



**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՅՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ**

## Անհատական կրթական ծրագրի (IEP) կամ Section 504-ի հարցերով նիստի ժամանակ աշխատանքային խումբը՝

Անհատական որոշում կկայացնի, թե արդյոք և որքանով է պահանջվում Կոմպենսատիվ կրթություն՝ հիմնվելով այն բանի վրա, որ անց էր կացվել հեռավար և/կամ հիբրիդային (առկա և հեռավար) ուսուցում՝ 2020 թվականի մարտի 17-ից մինչև 2021-2022 ուսումնական տարվա ավարտը (համաճարակային շրջան)՝ պայմանավորված COVID-19-ի պատճառով:

Կվերանայի, կքննարկի և կփաստաթղթավորի Կոմպենսատիվ ուսուցման անհրաժեշտությունը համաճարակի ժամանակաշրջանի հետ կապված: Խումբը կքննարկի այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշակերտի կողմից հատուկ կրթություն ստանալը և հարակից օժանդակ միջոցներն ու ծառայությունները, որոնք թվարկված են IEP կամ Section 504 պլանում և ուժի մեջ էին 2020 թվականի մարտից, և արդյոք հատուկ կրթությունը և/կամ հարակից ծառայությունները համապատասխան են աշակերտի անհատական կարիքներին:

Եթե աշխատանքային խումբը որոշի, որ Կոմպենսատիվ ծառայությունները անհրաժեշտ են, ապա այն կսահմանի համապատասխան և ողջամիտ ժամկետ՝ համաձայնեցված Կոմպենսատիվ ծառայությունների մատուցման համար, իսկ եթե խումբը որոշի, որ Կոմպենսատիվ ծառայություններն անհրաժեշտ չեն, ապա այդպիսի որոշման պատճառները կփաստագրվեն:

Ծնողներին/խնամակալներին կտրամադրի Շրջանում գրանցված տեղեկատվություն համաճարակի ընթացքում տրամադրվող հատուկ կրթության և հարակից ծառայությունների ծավալի մասին, ներառյալ՝ IEP-ի մատյանները վերանայելու կամ Section 504 ծառայությունները քննարկելու հնարավորությունը:

Կորոշի, թե արդյոք որևէ վերականգնման ծառայություններ կարող են պահանջվել համաճարակի պատճառով գիտելիքների կորստի համար:

Կճանուցի ծնողներին/խնամակալներին իրենց գրպանից կատարած ծախսերի վերականգնման գործընթացի մասին՝ համաճարակի ժամանակ աշակերտների IEP-ի կամ Section 504-ի պահանջվող ծառայությունների մատուցման համար:

## Կոմպենսատիվ ուսուցման նշանակման չափանիշները

- Սովորական կամ հատուկ կրթություն և հարակից օժանդակ միջոցներ և ծառայություններ, պահանջվող աշակերտի Section 504 պլանով կամ IEP-ով, որոնք ուժի մեջ էին 2020 թվականի մարտի սկզբին
- Համաճարակի ընթացքում դասերի և հարակից ծառայությունների բացակայության հաճախականությունը և տևողությունը
- Արդյոք համաճարակի ժամանակաշրջանում մատուցվող կանոնավոր և հատուկ կրթությունը և/կամ հարակից ծառայությունները համապատասխանել են երեխայի անհատական կարիքներին
- Երեխայի առաջադիմության ներկա մակարդակը
- Առաջադիմության նախորդ ցուցանիշները
- Արդյոք գնահատումները հետաձգվել են
- Ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն

## Իսկ եթե իմ երեխան արդեն ստանում է վերականգնման ծառայություններ

Աշակերտների վերերաբերյալ, ում համար արդեն նշանակվել են վերականգնման ծառայություններ և ովքեր ստանում են դրանք, IEP-ի կամ Section 504 թիմը՝ Կոմպենսատիվ կրթության անհրաժեշտությունը և չափը որոշելիս կարող է հաշվի առնել, թե արդյոք աշակերտի վերականգնման ծառայությունները, որոնք արդեն իսկ տրամադրվել են, բավարարում են նրանց առանձնահատուկ անհատական կարիքները:

## Ձեր ընթացակարգային երաշխիքները

Ձեզ տրամադրվում են նույն ընթացակարգային երաշխիքները, որոնք միշտ առկա են եղել աշխատանքային խմբի որոշումը վիճարկելիս:

Եթե դուք վիճարկեք IEP-ի կամ Section 504 աշխատանքային խմբի որոշումը, թե արդյոք կամ ինչ աստիճանի ծառայություններ են մատուցվել ձեր աշակերտին համաճարակի ժամանակաշրջանում, դուք կտեղեկացվեք որոշումը վիճարկելու գործընթացի մասին և ձեզ կտրամադրվեն ընթացակարգային երաշխիքներ, ներառյալ իրավունքը վիճարկել Section 504-ը կամ IEP խմբի որոշումը՝ կապված Կոմպենսատիվ կրթության հետ՝ անաչառ դատավարական լուսնների միջոցով:

Հատուկ կրթության ծառայությունների Ծնողների ուղեցույցը (ներառյալ ընթացակարգային իրավունքները և երաշխիքները) հասանելի է Հատուկ կրթության բաժնի կայքէջում՝

<https://achieve.lausd.net/sped>

Section 504 մասին գրքույկ և տեղեկատվություն ընթացակարգային երաշխիքների մասին՝

<https://bit.ly/504Brochure>